«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	<< Ինտեգրված ուսուցումը մայրենիի դասավանդման գործընթացում >>
ԱՌԱՐԿԱ	<< Մայրենի >>
ՀԵՂԻՆԱԿ	Հասմիկ Ժիրայրի Հակոբյան
ՄԱՐԶ	ք. Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<< Շ. Շահամիրյան >> կրթահամալիր

Բովանդակություն

Ներածություն ----------3-4

Ուսումնական ծրագրի ինտեգրում ----------5-6

Ինտեգրումը << Մայրենի>> առարկայի դասավանդման գործընթացում

----------7-13

Եզրակացություն ----------14

Օգտագործված գրականության ցանկ ----------15

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը ձգտում է ստեղծել մի այնպիսի ազգային կրթահամակարգ, որ կարողանա դիմակայել եվրոպական կրթական չափանիշների մարտահրավերներին: ՀՀ ազգային կրթահամակարգի առանցքը կազմում է մայրենի լեզվի ուսուցումը, որը միտված է սովորողներին գինելու ոչ միայն կապակցված գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտություններով, այլև նրանց ապահովելու տեսական գիտելիքներով, որը հնարավորություն կընձեռի լեզվական իրողություններից անցնելու ընդհանուր լեզվական վերացարկվածության:

Ինտեգրման ուսուցման վերաբերյալ գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժներ / մանկավարժագետներ/ Ի. Պ. Պոդլասին, Յ. Հ. Պեստալոցցին, Յ. Ա. Կոմենսկին, Վ. Սուխոմլինսկին և այլոք:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն արդյունավետ է սովորողների տարբեր խմբերի հետ իրականացնելիս: Ինտեգրված ուսուցումը իր մեջ ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը և թե՛ բազմահամակարգային դասարաններում իրականացվող դասավանդման գործընթացը:

Ե. Ա. Եկժանովան հետևյալ կարծիքն է արտահայտել, թե՝ << Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում >> : / 1, էջ 52 /

Թեմայի ուսումնասիրման արդյունավետությունը պայմանավորված է մայրենիի դասընթացի յուրացման գործընթացում միջառարկայական և ներառարկայական կապերի ստեղծմամբ, աշակերտակենտրոն մեթոդների, դերային և մտածողական խաղերի կիրառմամբ, զանազան տեսադասերի և սահիկաշարերի օգտագործման միջոցով ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ:

Հետազոտության նպատակը.

Ցույց տալ, որ մայրենիի դասավանդման գործընթացում ինտեգրումը՝

ա/ նպաստում է սովորողների մոտ հետազոտական հմտությունների զարգացմանը,

բ/ նպաստում է ներանձնային հարաբերությունների զարգացմանը,

գ/ ենթադրում է նոր՝ փոխներգործող մեթոդների, մեթոդական զանազան ինքնատիպ հնարների, տեղեկատվական, ուսուցման տեխնիկական միջոցների, յուրահատուկ և տարաբնույթ դասատիպերի կիրառում,

դ/ ծառայում է սովորողների բազմակողմանի գիտելիքների հարստացմանը / գիտելիքները կառուցվում են ուսուցիչների և սովորողների համատեղ բազմաչարչար աշխատանքի շնորհիվ /:

Ինտեգրված ուսուցման վերջնարդյունքում սովորողների մոտ կզարգանան հմտություններ, կարողություններ և կարողունակություններ, ինքնուրույն կշռադատելու և ստեղծագործելու մտածողություն, ի վերջո՝ քննադատական վերլուծություն:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու ենթավերնագրից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ուսումնական ծրագրերի ինտեգրում

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: / 2, էջ 59 /

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են ինտեգրված ծրագրերի հետևյալ տեսակները.

ա/ բազմառարկայական

բ/ միջառարկայական

գ/ անդրառարկայական / 3, 16-17 /

Բազմառարկայական մոտեցման դեպքում վերցվում է թեման, ընտրվում են առարկաները, որոնք անդրադառնում են տվյալ թեմային՝ դասավանդման ընթացքում ուսումնասիրելով երևույթը տարբեր գիտությունների ընկալումների տեսանկյուններից:

Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները: Ի տարբերություն բազմառարկայական մոտեցման՝ այս դեպքում շեշտը առանձին առարկաների թեմաներից տեղափոխվում է դեպի այդ առարկաների համար ընդհանրական թեմաները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա:

Անդրառարկայական մոտեցման դեպքում թեման դուրս է գալիս առարկաների սահմաններից՝ լիովին ջնջելով առանձին առարկաների սահմանները: Նման ինտեգրում է տեղի ունենում նախագծային ուսումնառության դեպքում. Սովորողները հետապնդում են կոնկրետ խնդիր:

Ինտեգրված դաս պլանավորելիս առաջնահերթ խնդիրն է որոշել առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանը և հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաներից վերցված բաղադրիչներ ու մեթոդներ:

Ինտեգրված դասեր հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

ա/ երբ նյութը կրկնվում է տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,

բ/ թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ օգտվելով այլ առարկաների պատրաստի նյութերից,

գ/ երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից

դ/ առարկայի դասավանդման ընթացքում պրոբլեմատիկ և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ: / 6, 135 /

Երբ ուսուցիչը մտադիր է ինտեգրված դաս անցկացնել, սկզբնական փուլում նա դիմում է այն մյուս ուսուցչին, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր դասապրոցեսում: Երկու ուսուցիչները միասին քննարկում են իրենց առարկայի ընդհանրությունները, հետաքրքրությունները, սովորողների պահանջների՝ իրենց ունեցած ռեսուրսները: Հաջորդ փուլը գործունեության ճիշտ կազմակերպումն է՝ քայլերի ճշգրիտ հաջորդականությունը՝ սպասված արդյունքը ապահովելու համար:

Առարկայական ուսուցիչների դերաբաշխումը, ներգրավվածությունը կարող է տարբեր լինել. Նրանք կարող են ունենալ հավասար մասնակցության իրավունք, կամ նրանցից մեկը կարող է լինել առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, տեսական նյութերը սպասարկող: Դասն ամբողջությամբ կարող է վարել մի ուսուցիչը, իսկ մյուսը դասարանում լինի ակտիվ հյուրի կարգավիճակում: /4, 64 /

Ինտեգրումը << Մայրենի >> առարկայի դասավանդման գործընթացում

<< կրթական համակարգում դպրոցական կրթության մեջ մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն միաժամանակ և՛ ուսումնասիրվող առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզուն որպես առարկա ենթադրում է նախ՝ բուն լեզվի իմացություն, ապա այդ լեզվով ազատ բանավոր և գրավոր հաղորդակցվելու, շարադրանք կառուցելու կարողություն, լեզվի քերականական կառուցվածքի իմացություն և այլն:

Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պետք է ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ, որի ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը / կրթությունը/ երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել և գրել, այլև իմացածը կյանքում կիրառել:

<< Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը: /6, 1/

Մայրենի լեզվի մեթոդիկայի երախտավորներից Ա. Տեր-Գրիգորյանի կարծիքով՝ << Լեզվական գիտելիքն այն չափով միայն պետք է տեղ ունենա մայրենի լեզվի տարրական դասընթացում, որքանով այն հասանելի է երեխայի ըմբռնմանը և որչափով է այն նպաստում խոսքի ուսուցումը գիտակցական հիմքերի վրա դնելուն, զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը, նրանց մեջ վերացարկում կատարելու կարողություն է մշակում: /5, 272/

Յուրաքանչյուր դաս որոշակի ամբողջություն է , որի բաղադրիչ մասերը անմիջականորեն կապված են միմյանց: Դասի հաջողության գրավականը ուսուցչի կողմից պատշաճ ձևով դասին պատրաստվելն ու ներկայանալն է: Դասի ամբողջականության և ներդաշնակության, սովորողների մոտ ընկալունակության ապահովումը իրականացվում է այն դեպքում, երբ ուսուցիչը հստակ պատկերացնում է դասի թեման, բարձրացված խնդիրները, դրանց արդիականությունը, հետաքրքրությունը սովորողների մոտ, ընտրված նյութի՝ բնագրի դաստիարակչական բնույթը, ուսուցողական արժեքը, ճիշտ է ընտրում առաջադրանք-վարժությունների հաջորդականությունը, կապը բնագրի հետ և այլն: Իսկ երեխայի մոտ հետաքրքրություն առաջացնելու, դասապրոցեսի մեջ ակտիվ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների նախասիրություններից, հետքրքրություններից բխող թեմայի ընտրությունն է:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է , որն իրականացվում է մասերը մեկ ամբողջության մեջ միավորելու և շրջապատի և բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:

Միջին դպրոցի 5-6-րդ դասարանների << Մայրենի >> առարկայի դասագրքերի բովանդակությունը լայն հնարավորություն է ընձեռում ինտեգրված դաս կազմակերպելու համար, քանի որ դասագրքերում նյութը ներկայացված է համալիր եղանակով՝ մեկ ամբողջության մեջ զուգակցելով տեքստ՝ իր ուսուցանող բովանդակությամբ, գրականագիտական տարբեր տեղեկություններ, տեքստի շուրջ բովանդակային և քերականական առաջադրանք-վարժություններ, հարցադրումներ՝ կապված հնչյունաբանության, բառագիտության և այլ լեզվական հասկացությունների հետ: Մասնավորապես 6-րդ դասարանի դասագրքերում զետեղված են այնպիսի նյութեր, որոնք ունեն աղերսներ աշխարհագրության, պատմության, հայրենագիտության, երաժշտության և այլ բնագավառների հետ, ուստի ուսուցչի համար առավել հեշտ,իսկ սովորողների համար առավել հետաքրքիր և ուսուցանող է դառնում ինտեգրված դասը հենց այս դասարանում: Ինտեգրված դաս իրականացնելու նպատակով ուսուցիչը պետք է ճիշտ կիրառի ժամանակակից մեթոդներ և մեթոդական հնարներ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա:

Միջին դասարանի դասագրքերում ներգրավված են այնպիսի բնագրեր, որոնք հնարավոր չէ անցնել առանց աշխարհագրության, պատմության, երաժշտության և նկարչության հետ միջառարկայական կապեր ստեղծելու:

Դրանցից են՝ Ս. Խանզադյանի <<Որպես նախաբան>> , Վ. Անանյանի <<Անձրև>> , ըստ Մ. Խորենացու << Հայկ և Բել >> , ըստ Փ. Բուզանդի << Արշակ և Շապուհ >>, ըստ Մ. Խորենացու << Արա Գեղեցիկ և Շամիրամ >>, Ս. Կապուտիկյանի << Մասիսին մոտիկ >>, Վ. Անանյանի << Սևանա լիճը >>, Մ. Ղուկասյանի <<Ուր է կղզյակն Սևանա >>, Ավ. Իսահակյանի << Արագածին >>, Հ. Սահյանի <<Արաքս >>, Է. Ավագյանի << Արտաշես և Սաթենիկ >>, Պ. Սևակի <<Երեբունի-Երևան >>, Մ. Գալշոյանի << Կռունկ >> և այլ ստեղծագործություններ / 6_րդ դասարան /:

Ներկայացնենք դասապրոցեսից մի հետաքրքիր հանձնարարություն, որի ընթացքում ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները կարդում են բնանկար կամ որևէ նկարագրություն պարունակող երկը, վերլուծում, դատողություններ անում և լրացնում << Քառաբաժան >> աղյուսակը:

Օրինակ՝ 6-րդ դասարանի աշակերտները Մ. Ղուկասյանի << Ուր է կղզյակն Սևանա >> նկարագրական-տեղեկատվական տեքստի վերլուծությամբ << Քառաբաժան >> աղյուսակը լրացնում են այսպես.

Ինչ տեսա. Կապույտ, կանաչ գույներ, լեռներ, ջրիմուռներ, ձկներ, ջրի ալիքներ…	***Ինչ լսեցի.*** Լճի ծփանքի ձայն, ճայերի կռինչ, քամու ձայն, մարդկանց խոսակցություններ…
Ինչ զգացի. Բերկրանք, հիացմունք, մաքրություն, հպարտություն, պատասխանատվություն…	***Նոր վերնագիր.*** << Կապույտ երազ >>, << Կապուտաչյա գեղեցկուհի >> …

Տվյալ թեմայի շրջանակներում << Աշխարհագրություն >> առարկայի հետ կապն անխուսափելի է: Ուսուցիչը կարող է դասարանը բաժանել 2 խմբի, հանձնարար

ել առաջին խմբին՝ գրել գիտական տեղեկություններ Սևանա լճի մասին, կազմել սահիկաշար / աշխարհագրության ուսուցչի օգնությամբ/, 2-րդ խմբին՝ գրել նկարագրական շարադրություն՝ օգտագործելով մակդիրներ, փոխաբերական արտահայտություններ / այսպիսով ամրապնդելով գեղարվեստական և գիտական խոսքը/:

Նկարչության ուսուցչուհին կարող է հանձնարարել որոշ՝ նկարելու հմտություն ունեցող աշակերտներին՝ նկարել Սևանա լիճը՝ իր երևակայությամբ / ապա վերլուծել ու բացատրել գույների ընտրությունն ու նշանակությունը /:

Կարելի է պայմանականորեն նամակ պատրաստել պատկան պետական մարմիններին, բնապահպանական կազմակերպություններին և հայտնել աշակերտների մտահոգությունները՝ կապված Սևանա լճի աղտոտման, ջրի մակարդակի նվազման և այլ խնդիրների շուրջ:

Բնագիտության ուսուցչուհու օգնությամբ կարող են տեղեկություններ հավաքել Սևանա լճի մերձակա բուսական աշխարհի, ջրում ապրող ձկնատեսակների առանձնահատկությունների մասին:

Վերոնշյալ առարկաների ինտեգրումով իրականացվում է միջառարկայական կապը, սովորողների մոտ զարգանում է հետազոտական աշխատանք կատարելու հմտություններ, ինքնուրույն գեղեցիկ խոսք կառուցելու կարողություն, կարդացածը և լսածը նկար-պատկերի տեսքով ներկայացնելու հմտությունը: Ի վերջո այս ամենի արդյունքում սովորողը հարստացնում է իր գիտելիքները՝ տարբեր առարկայական տեսանկյուններից դիտարկելով և վերլուծելով տվյալ նյութը: Սովորողը, ծանոթանալով տվյալ նյութի հետ կապված այս կամ այն խնդրի հետ, ինքը առաջարկում է բազմապիսի լուծումներ:

Հատկանշական է այն, որ հանձնարարությունների գերակշռող մասը սովորողը կատարում է ՏՀՏ-ների կիրառմամբ, որն էլ կարելի է համարել <<Ինֆորմատիկա >> առարկայի ինտեգրում:

Մայրենիի դասերին լեզվական նյութի արդյունավետ յուրացման լավագույն գործիքներից մեկը ՏՀՏ-ների կիրառումն է: Փորձը ցույց է տվել, որ լեզվական նյութի ուսուցման ժամանակ համակարգիչների կիրառումը ոչ միայն տեղին է ու նպատակահարմար, այլև ուսուցման այս ձևի հիմքում դրվում են սովորողի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից պահանջմունքը: Այս տեսակետից բացառիկ են ինտեգրման մեթոդով ստեղծված համակարգչային խաղերն ու վարժությունները, որոնք թույլ են տալիս երեխայի մեջ զարգացնել վերացական, տրամաբանական, օպերատիվ մտածողություն, վերլուծելու և կանխատեսելու հստակ հնարավորություններ: / 7, 2 /

Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման մեջ դառնում է մշակույթի իրական մասնիկ, և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը պարտադիր է ու անխուսափելի: /8, 50 /

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը, բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այդպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ, երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնացվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն:

Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:

Փորձը ցույց է տվել, որ ինտեգրված դասն ավելի նախընտրելի է սովորողի կողմից, քան սովորական դասը, քանի որ միջառարկայական կապի ապահովման փուլում աշակերտներից յուրաքանչյուրը զբաղվում է իր համար հետաքրքիր << աշխատանքով >> , հետազոտում այն նյութը, որը, դասից դուրս երևի չէր ուսումնասիրի: Վստահաբար կարելի է նշել, որ տվյալ դասի շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ու հմտություններն առավել մնայուն են, քանի որ հիմնված են ճշգրիտ տեղեկատվության, զանազան նորարարությունների, մեթոդների վրա, որոնք սովորողի մոտ զարգացնում են տարբեր կարողունակություններ:

Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառներում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում: Վ. Վ. Կրաևսկու, Ա. Վ. Պետրովսկու, Ն. Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը: Նովիկովայի և Վ. Կ. Կարոլովսկու ստեղծագործություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները:

6-րդ դասարանի դասագրքում տեղ գտած պատմական բնույթի բնագրերը հնարավորություն են ընձեռում ինտեգրված դասն իրականացնել հատկապես <<Պատմություն >> և << Հայրենագիտություն >> առարկաների հետ / << Արշակ և Շապուհ >>, << Հայկ և Բել >>, << Արտաշես և Սաթենիկ >> /:

Այս բնագրերից յուրաքանչյուրն ընտրելով դասի թեմա՝ հարակից առարկաների ուսուցիրները կարող են տալ հետևյալ հանձնարարությունները.

ա/ հավաքագրել բովանդակային գիտական տեղեկություններ հայ թագավորների վերաբերյալ, կազմել նրանց գահակալման ժամանակագրական աղյուսակները / պատմություն/,

բ/ ճշտել, գրի առնել, պատրաստել սահիկաշար՝ բնագրերում առկա տեղանունների, արքաների անունները կրող մայրաքաղաքների վերաբերյալ /աշխարհագրություն /

գ/ երևակայորեն պատկերել արքաներին / կերպարվեստ /…

Այնուհետև գլխավոր առարկայի՝ մայրենիի ուսուցիչը կատարում է այս ամենի սրբագրողի, համակարգողի դերը՝ ըստ իր՝ նախապես կազմած դասի պլանին համապատասխան՝ ներկայացնելով դասապրոցեսի բաղադրիչ փուլերի հաջորդականությունը:

Կարելի է նաև բեմադրել << Արշակ և Շապուհ >> բնագրի՝ արքաների երկխոսության դրվագը՝ նախապես պատրաստելով համապատասխան հագուստներ:

Կշռադատման փուլում աշակերտները կարժևորեն մարդկային հարաբերություններում ազնվության կարևորությունը, կվերլուծեն հայրենասիրության գաղափարը, կհայտնեն սեփական տեսակետները, <<կփոխեն>> բնագրի ավարտը՝ ներկայացնելով և վերլուծելով իրենց տարբերակները:

Առաջադրվող հարցադրումների և հանձնարարությունների բովանդակությունն ու ծավալը ինտեգրված դասի ընթացքում տարբեր է՝ կախված սովորողների ընդունակություններից և կարողունակություններից:

Եզրակացություն

<< Ինտեգրումը մայրենիի դասավանդման գործընթացում >> թեմայի ուսումնասիրման արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացության, որ ինտեգրումը մայրենիի դասավանդման գործընթացում /հատկապես միջին դասարաններում / բավականին արդյունավետ է: Այն ուսուցիչներին հնարավորություն է տալիս / երբեմն՝ պարտադրում / անընդհատ կատարելագործվել՝ պարբերաբար փնտրելով առավել նոր ու ժամանակակից գաղափարներ, հետաքրքիր ու բազմազան մոտեցումներ՝ այս կամ այն թեմայի շուրջ:

Ինտեգրում իրականցնելիս առարկայական ուսուցիչների միջև ներանձնային ճիշտ հարաբերությունների արդյունքում ծնվում են բազմապիսի մեթոդներ ու մեթոդական հնարքներ, որոնք ծառայում են ի նպաստ աշակերտի:

Ինտեգրված դասերն ավելի հետաքրքիր և ուսուցանող են, դրանք օգնում են սովորողներին առավել արագ և դյուրին ընկալել ու սերտել թեմաները:

Ինտեգրված դասի իրականացման ընթացքում սովորողների մոտ զարգանում են հետազոտական ունակություններ, սովորողները կարողանում են միմյանց հետ համագործակցել՝ ապահովելով ներանձնային առողջ հարաբերություններ: Դասապրոցեսում դրսևորվում է նաև սովորողների՝ միտքն ու խոսքը գրագետ արտահայտելու ունակությունը, սուբյեկտիվ կարծիք հայտնելու հնարավորությունը: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցում, նպաստում է աշակերտի ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ինտեգրված ուսուցման իրականացման արդյունքում սովորողների համար պայմաններ ստեղծվեցին՝ կիրառելու իրենց գործնական հմտությունները, ինքնադրսևորվելու՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն, բազմակողմանի գիտելիքներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Екжанова Е. А., Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Текст предоставлен правообладателем http.//www.litres.ru Основы интегрированного обучения: пособие для вузов/ Е. А. Екжанова, Е. В. Резникова: Дрофа. Москва 2008-ISBN 978-5-358-0465-1-210.
2. Броже Т. Г., Интеграция предметов в современной школе. /Летература в школе 5, 1996, с. 59-63.
3. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, << Ինտեգրված թեմատիկ միավորներ >> , Երևան, 2003թ., 256 էջ:
4. Зверев Д. И. Взаимная связь учебных предметов, М., Знание 1977,с.64-69
5. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան,1980, 564 էջ
6. << Հայոց լեզու և գրականություն >> ծրագրեր. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, Երևան 2007
7. Седов И. А. Компьютерная игра как средство саморазвития будущего учителя в условиях информатизации обшества, 2002, с.2.
8. Տ. Սարգսյան, Համակարգչային խաղերը ինտեգրված ուսուցման գործընթացում , ԿԱԻ , Մանկավարժություն, Երևան 2011:
9. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք: